միախառնելով հանդիսանում էին ամբողջ հովիտը իր կանաչազարդ, գեղագրական տարածութեան մէջ: Ես ջոկում էի բոլոր ինձ ծանօթ տեսարանները:

Հեռու, բարձր ապառաժի վրայ, տեսնում էի ես Ղարնի-Եարուղի աւերակները, աւերակները այն առասպելական ամրոցի, ուր թափոել էր այնքան արիւն, այնքան արտասուք եւ սէր... ուր անօրէն թուրք իշխանի ձեռքը խլում էր ամուսնի գրկից կնիկների ամենագեղեցիկը... ուր տարւում էին ամենաընտիր աղջիկները ամբողջ գաւառից, եւ անբախտ զոհերի արտասուքը, ընտանիքի սրբութիւնը, ծնողների աղաչանքը չէին կարողանում ամոքել բռնակալի կրքերը...: Դէպի աջ նայելով, ես տեսնում էի սուրբ Յովհաննու մատուռը, միայնակ կանգնած բլուրի գագաթին, որը մի ահագին շաքարի գլխի նման վեր էր բարձրացել ընդարձակ դաշտի միջից: Որքա՜ն քաղցր զգացմունքներով կապուած էր այդ սրբարանը իմ յիշողութեան հետ: Այնտեղ, տօնական հանդէսների ժամանակ, ուխտաւորների աշխարհային զուարճութիւնները, ախտերը եւ կրքերը եփ էին գալի, բորբոքւում էին, միախառնելով կրօնական ջերմեռանդութեան հետ...

Վերջապէս իմ աչքին ընկաւ քաղաքը. նա թաքնուած էր ծառազարդ այգիների մէջ, որոնք ձեւացնում էին մթին բոլորակ տարածութիւն: Ես որոշեցի մեր թաղը, այնտեղ ես երկար եւ երկար որոնում էի «մէկին»... կարծում էի, թէ կը տեսնեմ նրան... Չգիտեմ ինչո՞ւ նոյն րոպէում իմ աչքերը լցուեցան արտասուքով, ես այլեւս չկարողացայ նայել...

Ես սկսեցի իջնել ցած, կրկին նոյն ոլոր-մոլոր սանդուղքներով: Այն ժամանակ միայն նկատեցի, որ աշտարակն ունէր մի քանի գաղտնի պահեստներ եւ խորին մթերանոցներ: Հետաքրքրութիւնը հրապուրեց ինձ մտնել նրանցից մէկի մէջ: Նեղ պատուհանից ներս ցոլացած լոյսով հազիւ կարողացայ որոշել հետեւեալ իրեղէնները. — զէնքերի զանազան տեսակներ, ձիաների թամբեր իրանց պարագաներով, խուրջիններ լիքը զանազան բաներով, որոնք այնքան ծանր էին, կարծես, ամբողջապէս լցուած լինէին մետաղներով: Ես ձեռքս տարայ մէկի մէջ, տեսայ, ուրիշ ոչինչ չկար, բայց միայն հրացանի փամփուշտներ, գնդակների կապոցներ եւ վառօդ: Այս մթերքը, անտարակոյս, պատկանում էր այն երեք հոգուն, որ պառկած էին աշտարակի ներքին յարկում: Բայց ի՞նչ նպատակի համար էր այդ բոլոր պատրաստութիւնը: — Այդ միտքը սկսեց տանջել ինձ: Այնտեղ կար պատրաստութիւն աւելի քան յիսուն հոգու համար: Բայց որտե՞ղ էին այդ մարդիկը: Ես ոչինչ հասկանալ չէի կարողանում: Երկիւղը եւ կասկածը տիրեցին իմ սրտին: Այստեղ երեւում էր ինչ-որ խորհրդաւոր ծածկապահութիւն...